ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-24/06>> ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան

10-19 հուլիս 2024թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Սարգսյան,

անդամներ՝ Լուսինե Նավասարդյան /ԲԱ/, Արմինե Աբրահամյան/ԲԱ/, Նարե Բարսեղյան /ԳԱ/, Հասմիկ Ղոնյան /ԳԱ/,

քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-24/06>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնման ընթացակարգի գնման գինը ներկայացված է սույն արձանագրության 3-րդ կետում:

1.2<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-24/06>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված կարգով և սահմանված ժամկետում www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ անձինք.

h/h	Մասնակցի անվանումը /անունը/	Էլ. հասցեն
1	<<Վարդ-1>> ՍՊԸ	vard1spy@mail.ru
2	<<Լիվալ Քոնթրոլ ՍՊԸ և <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների տեխնիկական հսկողության ՍՊԸ կոնսորցիում	livalcontrol@mail.ru
3	<<Սամալիա>> ՍՊԸ	samalia.llc@mail.ru
4	<<Էներջի ֆաքթրի>> ՍՊԸ	armeps.am համակարգում մասնակցի կողմից փաստաթղթեր կցված չեն

1.3 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ընդունվել են և սահմանված կարգով բացվել բացող անդամների կողմից, դրանք համարվել են հետագա գնահատման համար ընդունելի և ներկայացվել գնահատման հաջորդ փուլ:

1.4 Հայտերի բացման-գնահատման նիստը շարունակվել է 2024թ. հուլիսի 15-ին:

2.Գնահատող հանձնաժողովի անդամները գնահատել են, որ <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-24/06>> ծածկագրով գնման ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ՝

1. <<Վարդ-1>> ՍՊԸ

ա/մասնակիցը մասնակցել է գնման ընթացակարգի 4 չափաբաժիններին, սակայն հրավերով նախատեսված 4 աշխատակցի փոխարեն ներկայացրել է 3 աշխատակից,

բ/չի ներկայացրել Լիցենզիայի էներգետիկ ներդիրը.

2.<<Լիվալ Քոնթրոլ>> ՍՊԸ և <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ կոնսորցիում

ա/մասնակիցը մասնակցել է գնման ընթացակարգի 4 չափաբաժիններին, սակայն հրավերով նախատեսված 4 աշխատակցի փոխարեն ներկայացրել է 2 աշխատակից, նաև՝ չի ներկայացրել աշխատակիցների համաձայնագրերը, դիպլոմները, անձնագրերը

բ/չի ներկայացրել Լիցենզիայի էներգետիկ ներդիրը.

գ/որպես մասնագիտական փորձառություն ներկայացրել է պայմանագիր, որը կնքված է նախորդ 3 տարիներից ավելի շուտ և չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, միաժամանակ՝ բացակայում են կատարման հիմնավորումները՝ հանձնման-ընդունման արձանագրությունը կամ կողմի հավաստումը,

դ/ներկայացված փաստաթղթերը թվային էլեկտրոնային ստորագրությամբ վավերացրած անձը լիազորված չէ Մասնակցի կողմից:

3.Գնահատող հանձնաժողովը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 1 աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու անհամապատասխանությունները:

4.<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-24/06>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են ստորև.

/ՀՀ դրամ/

Գնման ընթացակարգի					
ՀՀ	Գնման առարկան / Մասնակիցները	Գնման գինը	մասնակիցների գնային առաջարկը		
			Արժեք	ԱԱՀ	Գումարը
1-ին չափաբաժին	Կապան համայնքի Աղվանի բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն	1260105			
1	<<Վարդ-1>> ՍՊԸ		768600		768600
2	<<Լիվալ Քոնթրոլ ՍՊԸ և <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների տեխնիկական հսկողության ՍՊԸ կոնսորցիում		840067	168013	1008080
2-րդ չափաբաժին	Կապան համայնքի Սզնակ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն	2997303			
1	<<Վարդ-1>> ՍՊԸ		1799000		1799000
2	<<Լիվալ Քոնթրոլ ՍՊԸ և <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների տեխնիկական հսկողության ՍՊԸ կոնսորցիում		1997500	399500	2397000
3-րդ չափաբաժին	Կապան համայնքի Դիցմայրի բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն	2193021			

1	<<Վարդ-1>> ՍՊԸ		1199000		1199000
2	<<Լիվալ Քոնթրոլ ՍՊԸ և <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների տեխնիկական հսկողության ՍՊԸ կոնսորցիում		1461667	292333	1754000
3	<<Սամալիա>> ՍՊԸ		1750000		1750000
4-րդ չափաբաժին	Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն	1047637			
1	<<Վարդ-1>> ՍՊԸ		634000		634000
2	<<Լիվալ Քոնթրոլ ՍՊԸ և <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների տեխնիկական հսկողության ՍՊԸ կոնսորցիում		698333	139667	838000

5.Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվել է 2024թ հուլիսի 19-ին, ժամը 12:30-ին:

Ընդունվել է ի գիտություն, որ <<Վարդ-1>> ՍՊԸ և <<Լիվալ Քոնթրոլ ՍՊԸ և <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների տեխնիկական հսկողության ՍՊԸ կոնսորցիումի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում չեն շտկել անհամապատասխանությունները, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի անդամները գնահատել են, որ <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-24/06>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հետևյալ կերպ՝

հ/հ	Մասնակցի անվանումը /անունը/	Հրավերով սահմանված նվազագույն պահանջները*		
		Պիտանելիության չափորոշիչ	Ոչ գնային պայմաններ	Ֆինանսական չափորոշիչ
1	<<Վարդ-1>> ՍՊԸ	Համապատասխանում է	Չի համապատասխանում	Համապատասխանում է
2	<<Լիվալ Քոնթրոլ ՍՊԸ և <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների տեխնիկական հսկողության ՍՊԸ կոնսորցիում	Չի համապատասխանում	Չի համապատասխանում	Չի համապատասխանում
3	<<Սամալիա>> ՍՊԸ	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է

*Գնահատումը վերաբերվում է մասնակիցների կողմից ներկայացված բոլոր չափաբաժիններին:

6.Ընթացակարգի հրավերի և հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

7.Գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ չեն ներկայացվել:

8.Հանձնաժողովը որոշեց՝

8.1.հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքների և գնահատման թերթիկների հիմքով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից <<Սամալիա>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից:

8.2. մերժել՝

<<Լիվալ Քոնթրոլ>> ՍՊԸ և <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների տեխնիկական հսկողության ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը. հիմք՝ գնային առաջարկը ստորագրված է չլիազորված անձի կողմից,

<<Էներջի ֆաքթրի>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը. հիմք՝ armeps.am համակարգում մասնակցի կողմից փաստաթղթեր կցված չեն՝ ներառյալ գնային առաջարկը:

8.3. գնման ընթացակարգը համարել չկայացած 1-ին, 2-րդ, 4-րդ չափաբաժինների մասով,

8.4. հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը և գնման գործընթացը շարունակել օրենքով սահմանված կարգով, ապահովել համապատասխան ծանուցումների, հայտարարությունների հրապարակումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ ---------- Ա. Սարգսյան

անդամներ ---------- Հ. Ղոնյան

---------- Ն. Բարսեղյան

---------- Ա. Աբրահամյան

---------- Լ. Նավասարդյան

քարտուղար ---------- Լ. Ավետիսյան